ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 20-Ն

30/09/2021

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով , ՀՀ Կառավարության 23.06.2015թ. թիվ 828-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով Աստղաձոր համայնքի բնակիչ Սամվել Սոսի Պողոսյանի 12.09.2021թ. դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Աստղաձոր համայնքի բնակիչ Սամվել Սոսի Պողոսյանի ընտանիքին սեփականություն իրավունքով պատկանող գ. Աստղաձոր 58-րդ փողոց 16/1 հասցեում գտնվող 05-013-0011-0013 ծածկագրով 0.0285 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման է: Առաջարկվում է դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ նշված հողամասը բնակելի կառուցապատման հողերի կազմից փոխադրել հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության , նշված տարածքում հասարակական սպասարկում իրականացնելու՝ խանութ կառուցելու նպատակով:

2. Առաջարկել Աստղաձոր համայնքի ղեկավարին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ գործընթացը կազմակերպելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌԱՖԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**